ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011թ. դեկտեմբերի 27 թիվ 205 - Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 1996 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ''Զինապարտության մասին'' ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածի պահանջները Աշտարակի զորակոչային տեղամասում 1996թ. ծնված պատանիների կցագրումն անցկացնելու նպատակով՝ *կարգադրում եմ.*

1.Կցագրման ենթակա պատանիների բժշկական զննումն անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. 2012թ. ողջ տարվա ընթացքում Աշտարակի զինկոմիսարիատում անցկացնել 1996թ. պատանիների կցագրումը.

1/Կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների ցուցակը ներկայացնել ''Աշտարակի բժշկական կենտրոն'' ՓԲԸ գործադիր տնօրենին նրանց հետագա բուժումը կազմակերպելու համար.

3.''Աշտարակի բժշկական կենտրոն'' ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Ա.Հովհաննիսյանին՝

1/ Բժշկական զննության անցկացման նպատակով Աշտարակի զինկոմիսարիատին ապահովել անհրաժեշտ մասնագետներով և բուժանձնակազմով, բժշկական պարագաներով և դեղամիջոցներով.

2/Օժանդակել 1995-1996թ. ծնված պատանիների ամբուլատոր քարտերի ժամանակին տրամադրումը զինկոմիսարիատին.

3/Արդյունավետ կազմակերպել կցագրման ժամանակ հայտնաբերված հիվանդ պատանիների բուժումը և արդյունքների մասին ներկայացնել հանձնաժողովի նախագահին:

4.Առաջարկել Աշտարակի տարածաշրջանի համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1/Աշտարակի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել 1995-1996թ. ծնված պատանիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ապահովել կցագրումից դուրս մնացած պատանիների ներկայությունը.

2/Ձեռնարկել անհրաժեշտ աջակցություն, որպեսզի զինակոչիկները ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ, անհրաժեշտության դեպքում տրամադրել փոխադրամիջոց:

5.ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Բասենցյանին՝

1/ Դիսպանսեր հսկողության տակ գտնվող 1995-1996թթ. ծնված պատանիների ամբուլատոր քարտերը և ցուցակները ներկայացնել Աշտարակի զինկոմիսարիատ:

2/ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ Վ.Գևորգյանին՝

Աշտարակի տարածքային զինկոմիսարիատ ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Աշտարակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից հաշվառված 1995-1996թթ. հաշմանդամ պատանիների ցուցակները:

6.Աշտարակի ոստիկանության պետին՝

1/Տարածային զինկոմիսարիատ ներկայացնել ՀՀՈ Աշտարակի բաժնի կողմից քրեական պատասխանատվությամբ նախաքննության մեջ գտնվող պատանիների ցուցակները:

2/Խիստ հսկողություն սահմանել ՀՀՈ անձնագրերի և վիզաների վարչության Աշտարակի անձնագրային բաժնի աշխատանքներին, բացառել զորակոչիկին գրանցելը և գրանցումից հանելը՝ առանց զինվորական հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գալու:

7.Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Աշտարակի զինկոմ Է.Մկրտչյանի վրա:

8.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԱՍՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2011թ. դեկտեմբերի 27-ի
թիվ 205-Ա կարգադրության

ԿԱԶՄԸ

Աշտարակի տարածքային զինվորական կցագրման բժշկական հանձնաժողովի

Է.ՄԿՐՏՉՅԱՆ –հանձնաժողովի նախագահ
Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ- թերապևտ
Գ.ՕՀԱՆՅԱՆ – վիրաբույժ
Ս.ՄԻՐԶՈՅԱՆ –ակնաբույժ
Ն.ՄԱՆՎԵԼՅԱՆ –մաշկավեներ.բույժ
Հ.ԲՈՅԱԽՉՅԱՆ -քիթ-կոկորդ-ականջ
Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ –նյարդաբան
Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ –հոգեբան
Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ -ատամնաբույժ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ